

ԿԱՐԾԻՔ

Միրանուշ Էդուարդի Կեսոյանի՝ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար հրապարակային
պաշտպանության ներկայացրած «Ներակայումը արդի հայերենում» թեմայով
թեկնածուական ատենախոսության մասին

Միրանուշ Էդուարդի Կեսոյանի «Ներակայումը արդի հայերենում» թեմայով
թեկնածուական ատենախոսությունը վերաբերում է հայ լեզվաբանների կողմից
մասնակիորեն ուսումնասիրված լեզվական իրողություններից մեկին՝ ներակայմանը:
Ատենախոսը քննության է ենթարկում արդի հայերենի բառային և քերականական
մակարդակներում, ինչպես նաև խոսքում ներակայորեն ընկալվող միավորները:

Ատենախոսության վերնագիրն իսկ վկայում է ընտրված թեմայի
արդիականության մասին, ուստի առիթից օգտվելով՝ անհրաժեշտ եմ համարում
դրվատանքի խոսք ասել թե՛ ատենախոսության գիտական ղեկավար, ր.գ.դ., պրոֆ.
Յու. Ավետիսյանի և թե՛ ատենախոսի՝ Մ. Կեսոյանի հասցեին՝ հայերեն լեզվական
նյութի հիման վրա մասնակիորեն ուսումնասիրված և համակողմանի քննության
կարոտ այս թեմայի ընտրության համար:

Ատենախոսությունն ունի ավանդական կառուցվածք (ներածություն, գլուխներ,
ենթագլուխներ, եզրակացություններ և այլն): Աշխատանքի տարբեր հատվածներում
հեղինակը կիրառել է տարբեր մեթոդներ, որոնցից նա հիշատակում է
նկարագրականը, վերլուծականն ու համադրականը, սակայն այդ շարքում կարող էր
ավելացնել նաև համեմատության մեթոդը, որից նույնպես օգտվել է (օրինակ՝ էջ 35):
Հստակորեն ձևակերպված են աշխատանքի նպատակն ու դրա իրականացմանը
տանող խնդիրները:

Ատենախոսության առավելություններն ակնհայտ են: Նշենք դրանցից մի
քանիսը:

1. Ներակայումը հայերենի համեմատաբար քիչ ուսումնասիրված
լեզվական իրողություններից է, ուստի ատենախոսն աշխատանքի ներածության մեջ

իրավացիորեն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ոչ միայն ներակայման, այլև վերջինիս առնչվող լեզվաբանական մի շարք այլ հասկացությունների (ենթատեքստ, հավելույթայնություն, կանխեսթադրույթ, ներակայույթ և այլն) մասին հայ և օտարազգի լեզվաբանների շրջանառած կարծիքներին՝ ասելիքը հիմնավորելով վերջիններիս հանգամանալից մեկնաբանություններով, իսկ երբեմն էլ հավելելով սեփական պատկերացումները:

2. Բուն աշխատանքը կատարված է խնդրո առարկա լեզվական նյութի համակողմանի քննությամբ: Մ. Կեսոյանն աշխատել է լուծել ներածության մեջ առաջադրած խնդիրները (էջ 3), որը նա կատարել է ակադեմիական բարեխղճությամբ և գիտական պատշաճ մակարդակով: Անշուշտ, այս բանին ատենախոսը հասել է ներակայմանը վերաբերող տեսական գրականության հնարավորինս հանգամանալից ուսումնասիրության արդյունքում:

3. Մ. Կեսոյանը քաջատեղյակ է քննվող թեմայի մասին առկա մեծ ու փոքր ծավալի մի շարք ուսումնասիրությունների: Ասվածի վկայությունը ատենախոսության թե՛ ներածության մեջ և թե՛ բոլոր գլուխներում առկա շուրջ հարյուր հիսուն հղումներն են հայերեն և օտար լեզուներով մասնագիտական աշխատությունների:

4. Աշխատանքը գրված է գրագետ լեզվով, շարադրանքն առանձնանում է տրամաբանական ներքին կապով: Ատենախոսության գիտական բառապաշարը, մասնավորապես բազմաթիվ եզրույթների տեղին գործածությունը, գրեթե անթերի շարադրանքը հավաստում են, որ Մ. Կեսոյանը պատրաստ է գիտահետազոտական աշխատանքի:

5. Հավատարիմ մնալով աշխատանքի առաջադիր խնդիրներին՝ Մ. Կեսոյանը ատենախոսության մեջ ժամանակ առ ժամանակ արևելահայերենի՝ դիտարկման արժանի լեզվական իրողությունները համեմատում է արևմտայերենի համանման իրողությունների հետ:

6. Ատենախոսության առավելություններից է և այն, որ հեղինակը, որպես կանոն, տեսական դրույթները գերազանցապես հիմնավորում է տիպական և գրեթե անսխալ օրինակներով:

7. Նկատի առնելով ատենախոսության ներածության մեջ առաջ քաշված խնդիրները և հիմք ընդունելով շարադրանքի տեսական դրույթները՝ ատենախոսն աշխատանքն ամփոփել է վերջիններից բխող մի շարք եզրահանգումներով:

8. Թեև Մ. Կեսոյանի ատենախոսությունն ընդհանուր առմամբ ավարտուն ուսումնասիրություն է, սակայն կարծում ենք՝ առավել հաջողված են աշխատանքի առաջին և երրորդ գլուխները («Ներակայումը բառային մակարդակում» և «Ներակայումը հաղորդակցական-գործառության մակարդակում»): Ինչ վերաբերում է երկրորդ գլխին («Ներակայումը քերականական մակարդակում»), ապա այն թերևս կարելի էր ներկայացնել առավել ծավալուն ձևով՝ քերականական մի շարք իրողություններ քննության ենթարկելով առավել հանգամանորեն: Ասվածը վերաբերում է ատենախոսության նշված գլխի թե՛ ձևաբանությանը և թե՛ շարահյուսությանը վերաբերող ենթագլուխներին:

Ատենախոսությունը հնարավորինս անթերի տեսնելու նկատառումով ստորև ներկայացնենք մեր մի քանի դիտարկումներն ու առաջարկությունները.

1. ատենախոսության 20-րդ էջում խոսվում է *-ք* ածանցի մասին, սակայն բերվում են նաև *-անք* ածանցավոր բառերի օրինակներ: Հմմտ. *մեղավոր, լուսանցային, կամական և թովչագին, համակրելի, մեծարելի*:

2. 34-րդ էջի 4-րդ կետում նշվում է, որ անվանման համար հիմք կարող է դառնալ տվյալ առարկայի՝ « 4. *կենդանու, թռչունի, միջադրի բնակության կամ բույսի աճելու վայրը* », սակայն բերվում են միայն միջատներին վերաբերող բնագրային օրինակներ:

3. Արևմտահայերենի հետ կատարված համեմատությունները ոչ միշտ են համապատասխանում առկա լեզվական փաստերին: Այսպես՝ նշելով, որ « արևելահայերենի շարահյուսական մակարդակի միավորն արևմտահայերենում վերածվում է բառային մակարդակի միավորի»՝ ատենախոսն արևմտահայերեն

օրինակների շարքում բերում է *գրոսավայր* – գրոսանքի վայր (էջ 36) բառը: Սակայն նկատենք, որ նշված իմաստը արևելահայերենում ևս արտահայտվում է բառային մակարդակի հենց նույն միավորով՝ *գրոսավայր*:

Արդի հայերենի հետ կապված՝ արժեք խուսափել ոչ միայն հազվադեպ վկայությամբ առանձնացող *գաղափարակուլան, ժողովրդահանդես, ահացուրտ, հրաշանշան, մարմարորմ, շքախաղ, հայրենատեգ* (և այլն), այլև այնպիսի բառային միավորների քննությունից, որոնց գործածությունն *արդի հայերենում* չի խրախուսվում, ինչպես՝ *հեռուստաստուդիա* և այլն:

4. Եթե ատենախոսը մշտապես չառաջնորդվեր բառերի՝ համապատասխան բառարաններում տեղ գտած բացատրություններով, ապա որոշ բառերի ներկայումը կարող էր այլ կերպ բնութագրել: Այսպես՝ *լիախինդ* բառը ԱՀԲԲ-ում բացատրվում է ածանցավոր բաղադրիչով (*խնդություն*)՝ «խնդությամբ լի», իսկ ԺՀԲԲ-ում՝ «լրիվ խնդուն, լրիվ ուրախ՝ երջանիկ», մինչդեռ այն առաջին հերթին հենց «*խինդով լի*» է նշանակում:

5. Համամիտ չենք ատենախոսի՝ *աննախադեպ* բառի գործածությանը վերաբերող այն մեկնաբանությանը, թե իբր դա «.... տնտեսական ոլորտում իշխանության ներկայացրած աննախադեպ աճի մասին է» (էջ 92): Իրականում խոսքը իշխանությունների կողմից *աննախադեպ* բառի՝ ամենատարբեր առիթներով տեղին ու անտեղի գործածության մասին է:

Այդպես էլ *սև խավիար*-ին վերաբերող հատվածում խոսքը ոչ միայն Ադրբեջան «հրավիրված պատվիրակներին» կաշառելու մասին է, ինչպես գտնում է ատենախոսը (էջ 112), այլ նաև Ադրբեջանից դուրս կատարվող կաշառատվության մասին (հմմտ. *խավիարային քաղաքականություն* բառակապակցությունը):


6. Աշխատանքում առկա են կետադրական և քերականական որոշ անճշտություններ ու անմիօրինակություններ (էջ 22, 91-94, 97, 99, 112), վրիպակներ (էջ 29, էջ 91), ոճական անհարթություններ (էջ 30, 98), շարադրանքի տեխնիկական կողմին վերաբերող անմիօրինակ լուծումներ (էջ 27, 28, 31, 43, 132-134): Հակված

ենք յուրատեսակ վրիպակ համարելու նաև ատենախոսի՝ մեծագուն հանրահայտ բառի «մեծ տուն ունեցող» բացատրությունը:

Վերոնշյալ թերություններն էականորեն չեն ստվերում ատենախոսության բուն արժանիքները. այն ինքնուրույն աշխատանք է և համապատասխանում է 02.01 դասիչով «Հայոց լեզու» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությանն առաջադրվող պահանջներին:

Ատենախոսության բովանդակությունն ամբողջովին արտացոլված է հեղինակի հրատարակած սեղմագրում և հողվածներում:

Խոսքս ամփոփելով՝ միջնորդում եմ ԲԿԳԿ-ի՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդին՝ «Ներակայումը արդի հայերենում» թեկնածուական ատենախոսության հեղինակ Միրանուշ Էդուարդի Կեսոյանին շնորհել Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա արժանի է:

019 մասնագիտական խորհրդի անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝  Գուրգեն Կիպրոնի Խաչատրյան
14.10.2024թ.

*Խաչատրյան ԵՎ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Գուրգեն Կիպրոնի
Խաչատրյանի ստորագրությունը:*

Վ.Գ.Բ., չորս կարգի 121 Բ.Կ.Խաչատրյան
14.10.2024թ.

